

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

**ԿՈԹԻ, ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆ, ՈՍԿԵՎԱՆ, ԲԱՂԱՆԻՍ ԵՎ
ԶՈՒԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

*Այս հետազոտությունը ստեղծվել է
Ամերիկայի ժողովրդի
աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
/ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով:
Հետազոտության
բովանդակությունը միմիայն
հեղինակներինն է և պարտադիր չէ
որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ
ԱՄՆ կառավարության
տեսակետները:*

Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Համայնքներ	4
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ	5
Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները	6
Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը.....	7
Ա. Անասնապահություն	7
Նախաձեռնություններ կաթի և մսի արտադրության վերաբերյալ.....	11
Բ. Հացահատիկային կուլտուրաների աճեցում	14
Գ. Այգեգործություն	16
Դ. Բանջարաբուծություն.....	18
Ենթակառուցվածքային ծրագրեր	19
Կանանց ներգրավվածությունը արժեզրթաներում	19

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի օգոստոս ամսին ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեչոթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Մահմանամերձ գյուղերը առանձնահատկություններ ունեն: Թեկուզ անընդհատ կրակի տակ, մահվան վտանգը գլխներին կախված, բայց մարդիկ ապրում են, երեխա ունենում, արարում ու ստեղծում:

Եվ սահմանը մարդկանց ավելի է կապում հողին, ու դժվար է անգամ տարբերակել, մարդը ապրում է այստեղ, որովհետև այլընտրանք չունի, թե հողը պահելու բնագոյն ու գաղափարը խորը արմատներ են գցել ու չեն թողնում, որ մարդիկ պանդխտության ճանապարհը բռնեն:

Բաղանիս: Նոյեմբերյան տանող ճանապարհին մեր գյուղերից առաջինն է: Երիտասարդ գյուղապետ ունեն: Գյուղի երիտասարդները որոշել են, որ իրենք են իրենց հողի տերը ու երիտասարդ գյուղապետ են ընտրել՝ եռանդով ու նոր գաղափարներով տոգորված: Ու գյուղում նոր շունչ կա: Երկար տարիների ընդմիջումից հետո սկսել են ցորեն ցանել, ռոտզման ջուրը հասել է գյուղ ու հուշում է նոր այգիներ տնկել, խաղողն ավելացնել: Համատեղ աշխատանքի սաղմերն արդյունք են տալիս, ու մարդիկ դրանից ավելի են ոգևորվում:

Ջուջևան: Միերը մեզ տարավ գյուղի գոմերի թաղը: Ամբողջ գյուղը ափիդ մեջ երևում է: Տների կողքին մեծ դեզերն են: Գյուղում խոտքաղ է: Գնալով ավելի ու ավելի քիչ մարդիկ են իրենց անասունը գարնանը քշում հեռագնա արոտներ, այնտեղ ապրում ու ստանում աշխարհի ամենամաքուր կաթը: Ջահելներն էլ սար չեն գնում. հոսանք չկա, ինտերնետ չկա... Միերը հարյուրից ավել կով ունի, բայց գոմ չունի. ուրիշի գոմում է պահում: Ծնողները կովերը սար են տարել, ինքն էլ սկսել է քաղը:

Ոսկեվան: Կարգ ու կանոն է սիրում գյուղը: Համայնքի ղեկավարն էլ՝ նախկին զինվորական: Մա այն եզակի գյուղերից է, որտեղ որոշումները կայացնում են համայնքով, ինքը ինքի են տալիս, ու գյուղն աստիճանաբար առաջ է գնում. նոր ճանապարհներ, մանկապարտեզ, վերանորոգված եկեղեցի: Ոսկեվանում արհեստավորները շատ են ու որակյալ: Ու քանի որ գյուղում գործ չկա, գնում են արտերկիր, աշխատում ու անպայման վերադառնում գյուղ՝ տուն են կառուցում, մեքենա են գնում:

Կոթի: Հայաստանի այս գողտրիկ անկյան միջնաբերդն է: Ասում են, երբ խորհրդային շրջանում Բերքաբերի ջրամբարից ջուրը գյուղ է հասել, կոթեցիները Հայաստանը ողողել են իրենց արևահամ խաղողով, դեղձով, ընկույզով, ձմերուկով, բանջարեղենով: Ծաղկել ու աճել է գյուղը,

գյուղացին դարձել է հմուտ այգեպան ու մեխանիզատոր... Պատերազմն ու խորհրդային կարգերի փլուզումը շատ բան են փոխել գյուղում: Հիմա հարյուրավոր հեկտար բարեբեր հողում ցորեն են մշակում, անասուն են պահում: Գուրգենն էլ պանիր է արտադրում, հիանալի պանիր: Բայց ջուրը կրկին գյուղ է հասնում, այս անգամ՝ Կարմրի Գյուղի սարերից: Ու գյուղացին կրկին մտածում է խաղողի ու ձմերուկի մասին՝ աշխատանքը դժվար է, բայց արդյունքն էլ՝ ցորենից անհամեմատ շատ:

Բարեկամավան: Երեք կողմից Ադրբեջանն է: Եվ մեջտեղում, մի փոքր կածանով Հայաստանին կպած՝ Բարեկամավան: Անտառների ու ձորերի մեջ ծվարած: Եվ, եթե չլիներ մշտական գնդակոծության վտանգը, այս գողտրիկ անկյունը կնմանվեր դրախտի: Հիմա այլ է իրողությունը: Գյուղի մի մասը անգամ խմելու ջուր չունի, էլ չասած՝ ոռոգման ջուրը: Բնակչությունը գնալով պակասում է: Այստեղ ընտանիք պահելն արդեն հերոսություն է: Բայց մարդիկ ապրում են, մտածում փոքր ջերմոցների, մեղվապահության կամ այգեգործության մասին, եթե ոռոգման ջուրը հասնի գյուղ: Բարեկամավանն օգնության կարիք ունի:

Անկախ աշխարհագրական դիրքից ու սահմանի հեռավորությունից, այս հինգ գյուղերը նման են մարդկանցով, վերաբերմունքով, տնտեսությամբ: Գյուղացիներն իրար աղջիկ են տվել, բարեկամացել ու դարձել են մեկ մեծ համայնք՝ մեկ տնտեսությամբ: Տարբեր են խնդիրներն ու հիմնահարցերը, բայց ուժեղ են նրանք միասին:

Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

	Կոթի	Բարեկամավան	Բաղանիս	Ջուջևան	Ոսկեվան
Բնակչություն	2230	835	312	577	1477
Տնային տնտեսություններ	865	264	85	180	406
Վարելահող	1594	250	-	110.7	343
որից՝ ջրովի	-	-	17.5	-	-
Ցանվող կուլտուրաներ (հա)	620	47.5	65	13.4	46.9
Այգիներ		7.5	2.5	6.8	33
Խոշոր եղջերավոր անասուններ	1070	490	320	615	396
որից՝ կով	561	208	195	245	254
Մանր եղջերավորներ	240	255	45	370	145
Թռչուններ	7770	905	620	768	1701
Կոմբայններ	2	-	2	-	1
Տրակտորներ	4	15	6	8	27
Բեռնատարներ	17	11	8	30	12

Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները

Ստորև հինգ համայնքների մրցակցային առավելություններն են:

- Բնակլիմայական պայմանները մեղմ են, նպաստավոր բարձրաժեք գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: Եթե հարևան Դևբերդի հովտում ցրտահարությունները և ծայրահեղ շոգը կարող են վնասել տնկիներն ու ոստերը, ապա այստեղ ջերմաստիճանի կտրուկ տատանումներ գրեթե չկան:
- Անտառի հարևանությունը բնակչությանն ապահովում է ոչ միայն հատապտուղներով, մրգերով, այլ նաև վառելիքայտով: Եվ, պլանավորված սանիտարական հատումների դեպքում, վառելիքայտը կարող է բավարարել ոչ միայն տների, այլ նաև ջերմոցների ջեռուցմանը:
- Տարածքով անցնող միջպետական մայրուղին բարենպաստ հնարավորություն է ստեղծում արտադրված գյուղմթերքների իրացման համար:
- Խորհրդային շրջանում բանջարեղենի, մրգերի, պանրի ու պահածոների արտադրության փորձն ու գիտելիքը դեռևս առկա են և կարող են ներդրվել գյուղատնտեսության և գյուղմթերքների վերամշակման մեջ:
- Տարածաշրջանում առկա են պանրի և պահածոների արտադրության փոքր ձեռնարկություններ, որոնք կարող են հաջողված նախադեպ հանդիսանալ այս գաղափարների կրկնության համար, եթե համապատասխան մարդիկ և շուկաները բացահայտվեն:
- Անասնապահության զարգացման համար առավելություն է հեռագնա արոտների և խոտհարքերի առկայությունը, որոնք ապահովված են ջրով և ճանապարհներն էլ բարեկարգ են:
- Տարածաշրջանի բնակչությունը հակված է համատեղ գործողությունների, փոփոխությունների, առկա են համագործակցության բազմաթիվ տարբերակներ:

Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը

Ա. Անասնապահություն

Ներկայացվող հինգ համայնքների տնտեսության մեջ ներկայում գերակա է անասնապահությունը: Ոռոգման համակարգերի ոչնչացման հետևանքում աստիճանաբար կրճատվեցին այգիները, խաղողի տնկարկները: Մարդիկ աստիճանաբար ավելացրեցին անասունների գլխաքանակը:

Անասնապահությունը ավադական ճյուղ է այս գյուղերի համար: Գյուղերի բնակչության գրեթե 50%-ը զբաղվում է անասնապահությամբ: Իհարկե տնտեսությունների մեծամասնությունը ունի մեկ-երկու գլուխ կով և միայն մեկ ընտանիքի կարիք է հոգում, բայց կան նաև մեծ անասնապահական տնտեսություններ:

Ստորև ներկայացվում է անասունների բաշխվածությունն ըստ անասնապահական տնտեսության մեծության:

Աղյուսակ 1. Անասնապահական տնտեսությունների չափերը

Ֆերմերներ (Խոշոր եղջերավոր անասնապահություն)	Քանակ / հոգի
Խոշոր (25 և ավել գլուխ)	8
Միջին (10 -25 գլուխ)	59
Փոքր (մինչև 10 գլուխ)	212

Եթե հինչև հինգ անասուն ունեցող տնտեսությունները հիմնականում անասունները պահում են գյուղում, ապա ավելի մեծ տնտեսություններում ընդունված է հեռագնա արտոնելում անասնապահությունը: Հեռագնա արտոնելը գյուղերից 10- 30 կիլոմետր հեռավորության վրա են, անտառածածկ ու գեղատեսիլ տարածքներում: Ուղղակի այս տարածքներում բացակայում են էլեկտրաէներգան, ինտերնետը: Գումարվում է նաև աշխատանքի բարդությունը, և երիտասարդներն աստիճանաբար հրաժարվում են անասնապահությունից:

Գյուղերում անասունների գլխաքանակի մասին պատմում է ներքևի աղյուսակը:

Աղյուսակ 2. Անասունների գլխաքանակը

	Կոթի	Բարեկամական	Բաղանիս	Ջուջևան	Ոսկեվան
Խոշոր եղջերավոր անասուններ	1070	490	320	615	396
որից՝ կով	561	208	195	245	254
Մանր եղջերավորներ	240	255	45	370	145

Անասնապահության արդյունքը միան ու կաթն է:

Կաթի իրացման արժեքային շղթան

Կովերի կաթնատվությունը ցածր է: Մեկ կովի միջին կաթնատվությունը մոտ 1500-1700 լիտր է տարեկան: Կաթի մի մասով գյուղացիները պանիր են արտադրում, մյուս մասը հանձնում են՝ մեկ լիտրը 130-140 դրամով: Հիմնական մթերոդը Կոթիի պանրի արտադրամասն է: Մեծ արտադրողները այստեղ ներկայացված չեն. մի կողմից հեռավորությունը, մյուս կողմից՝ կաթի սղությունը և տեղի շուկայում ձևավորված գինը վանում են մեծ մթերողներին:

Արտադրված պանիրը հանձնում են միջնորդ վերավաճառողների կամ հասցնում Երևան և այլ քաղաքներ ու վաճառում խանութներին: Առաջին դեպքում գինը չի անցում 1300-1400 դրամից, իսկ երկրորդ դեպքում հասնում է 1600-1700 դրամի:

Կաթի արտադրության հետ կապված շահութաբերության հաշվարկը ներկայացված է ստորև .


Աղյուսակ 3. Կաթի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կովի դեպքում:

1	Ստացվող կաթ	1 600 լիտր x 10 = 16 000 լիտր
1.1	Կաթի վաճառքից եկամուտ	16 000 x 130 = 2 080 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 2 400 000 դրամ
4	Ծախսեր	= 926 000 դրամ ¹
5	Շահույթ	= 1 474 000 դրամ

¹ Ֆերմերի անմիջական մասնակցությունը խոտհարքի գործընթացին, եթե առկա է սեփական գյուղ. մեքենա, կրին և այլ գործողություններին մոտ 40%-ով նվազեցնում է ծախսը:

Կաթի իրացման արժեքային շղթան պատկերվող ներկայացված է ներքևի գծապատկերում:

Գծապատկեր 1. Կաթի արժեքային շղթան



<p>Կաթի արտադրության մեջ նոր տեխնոլոգիաներ հիմնականում չեն կիրառվում: Աստիճանաբար ներդրվում են կթի կիսաավտոմատ համակարգերը: Արհեստական սերմնավորման գծով արվում են առաջին քայլերը, որոնք դեռ հատվածային են: Կաթի արտադրության մեջ արդյունավետ են տասը գլխից ավել կով ունեցող տնտեսությունները:</p>	<p>Պանրի արտադրության մեջ հիմնականում ավանդական տեխնոլոգիաներ են կիրառվում: Արտադրության պայմանները չունեն որակյալ արտադրանք թողարկելու նորմերին համապատասխանություն: Նոր սարքավորումներ ունի միայն Կոթիի պանրի արտադրամասը:</p>	<p>Փաթեթավորում և բրենդ ունի միայն Կոթիի պանրի արտադրամասը, որն առաջին քայլերն է անում այս ոլորտում ու հաջողություն ունի: Տնական պայմաններում արտադրված պանիրը հիմնականում չի փաթեթավորվում, անվանում չունի:</p>	<p>Կոթիի պանրի արտադրամասը և տնական պայմաններում համեմատաբար բարձր որակի արտադրողները ուղղակի կապվում են Երևանյան և այլ քաղաքների խանութների հետ: Մնացածը իրացնում են միջնորդների՝ ավելի ցածր գնով: Տարածված է նաև հենց գյուղում կամ մոտ քաղաքներում ապրող բարեկամներին կամ հարևաններին վաճառքը:</p>
--	--	--	--

Մսի իրացումը

Տարածաշրջանում տարեկան արտադրվում է 80 տոննա տավարի, 16՝ գառի և 22՝ խոզի միս: Գյուղացիական տնտեսություններն հիմնականում կախման մեջ են մթերողներից, ովքեր մեծամասամբ այլ համայնքներից են:

Ստորև աղյուսակում ներկայացված է մսի արտադրության ծախսերի և եկամտի համեմատական հաշվարկը:

Աղյուսակ 4. Մսի արտադրության ծախսերի և եկամտի հաշվարկ (տավար, ոչխար, խոզ)

1	Անվանումը	Խոզ	Բովոդ հորթեր	Ոչխար
2	Օպտիմալ տնտեսություն՝	30 հատ երկու ամսեկան գոճի	20 հորթ	100 ոչխար
3	Ստացվող արդյունքը միավորից	40 կգ միս յուրաքանչյուր վեց ամսեկան խոզից	200 կգ միս երկու տարում	1 գառ
4	Ընդհանուր արդյունքը	1200 կգ միս	4000 կգ միս	100 գառ
5	Մեկ միավորի մեծածախ գինը	3000 դրամ մեկ կիլոգրամ խոզի միսը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը	1 գառը 40 000
6	ստացվող եկամուտը ('4'x'5')	3 600 000	8 000 000	4 000 000
7	անհրաժեշտ ծախսերը	1 250 000	3 560 000	1 150 000
8	Շահույթ	2 350 000	4 440 000 - 2 տարվա համար 2 220 000	2 850 000

Տավարի մսի արտադրությունը տարածաշրջանում արդյունավետ է, եթե տնտեսությունը ավելի քան վեց գլուխ ցուլիկ է բուծում, ինչպես նաև արտամտորային շրջանում ցուլիկները պահում է

հեռագնա արտոններում: Այս կերպ տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների մոտ 30%-ը զբաղվում է տավարաբուծությամբ:

Ոչխարաբուծությունը զարգացած չէ: Հիմնականում մինչև տասը գլուխ ոչխար ունեն, այլն էլ՝ հատուկենտ տնտեսություններ: Բացասաբար է ազդել Ադրբեջանի կողմից անասնագոդությունը, ինչպես նաև հեռագնա արտոններում ոչխարաբուծության դժվարությունն ու շուկայում՝ գների հաճախակի տատանումները:

Խոզաբուծությունը կտրուկ նվազել է աֆրիկյան ժանտախտի համաճարակից հետո: Հիմա էլ, էթե գյուղացիները ցանկանում են անտառներում խոզ պահել, առկա է վարակման վտանգը: Մյուս տարբերակը մսուրային պահվածքն է, որի համար ավելի մեծ ծախսեր են պահանջվում. գյուղացիները աստիճանաբար սկսում են այս տարբերակի կիրառումը:

Ընդհանուր առմամբ, մսի արտադրության ծավալները վերջին երեք տարիներին աճում են ն՝ տավարաբուծության, ն՝ ոչխարաբուծության մեջ՝ պայմանավորված ներդրված գումարի արագ վերադարձով (գարնանը գնում են ցուլիկները, ուղարկում հեռագնա արտոններ, իսկ աշնանն արդեն մորթում են և վաճառում): Երիտասարդներն էլ ավելի շատ են հակված այս ոլորտում ներդրում կատարել, քանի որ համեմատաբար քիչ ֆիզիկական աշխատանք է պահանջում:

Նախաձեռնություններ կաթի և մսի արտադրության վերաբերյալ

Անասնապահության, ինչպես նաև կաթի ու մսի հետագա վերամշակման ուղղությամբ տարածաշրջանում հարկավոր է ներքոնշյալ գործողությունների իրականացումը:

Անասնապահության մեջ ֆիզիկական աշխատանքը շատ է և ծանր, երիտասարդներն էլ խուսափում են դրանից, պետք է հնարավորինս մեքենայացնել ն՝ անասունների պահքը, ն՝ խոտքաղն ու խոտի մատակարարումը: Այս առումով հետևյալ գործընթացներն են արդեն սկսվել և կարիք կա խթանելու, աջակցելու՝

- գումային պայմանների բարելավում, կառուցում, գումադրի հեռացման մեքենայացում:

- Ժամանակակից գյուղտեխնիկայի ապահովում, լիզինգային եղանակով իրացում գյուղացուն: Հատկապես՝ փոքր հզորության տրակտորներ և խոտհնձիչներ, խոտի հակավորման սարքավորումներ:
- Կթի սարքավորումների լայնատարած կիրառում:

Այժմ բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ ցանկանում են ավելացնել անասունների գլխաքանակը, սակայն հասանելի ֆինանսավորում չկա, հատկապես՝ տասից ավել անասնագլխաքանակ ունեցող տնտեսությունների զարգացման համար: Պետության կողմից սուբսիդավորվող վարկերը առավելապես 2-5 անասուն ունեցող տնտեսությունների համար են (մինչև մեկ միլիոն դրամ): Ավելի մեծ տնտեսություններն այդ գումարով զարգանալ չեն կարող, իսկ գյուղի զարգացման համար միջին ֆերմերային տնտեսությունների կայացումը հաջողության էական գործոն է:

- Օպտիմալ ֆերմերային տնտեսությունների (10 և ավելի գլխաքանակ անասունով) ֆինանսավորման մեխանիզմի ներդրում: Չորս միլիոն դրամից ավելի և տարեկան տասը տոկոս տոկոսադրույքից պակաս պայմաններով վարկերը կարող են խթանել նկարագրված թիրախ տնտեսությունների զարգացումը:

Տարածաշրջանում անասունների հիմնական ցեղատեսակը "Կովկասյան գորշն" է: Օրինակելի պահվածքի դեպքում այս ցեղատեսակի կաթնատվությունը կարող է հասնել մինչև 3500-4000լ. տարեկան ծավալի: Ցավոք, ամռան երկու- երեք ամիսներից բացի, անասունները թերսնված են, պայմանավորված խոտի որակով և լրացուցիչ կերի բացակայությամբ, ինչն էլ կրճատում է կաթնատվությունը մինչև 2000 լ-ի տարեկան: Բացի այդ, կովերի ծինը հիմնականում հունվար-մարտ ամիսներին է: Այս ժամանակահատվածում ամբողջ Հայաստանում կաթ չկա, զինը բարձր է (170-200 դրամ), իսկ ամռան ամիսներին, որը նաև համընկնում է կաթնատվության պիկի հետ, զինը նվազագույնն է՝ մոտ 130 դրամ: Այս երկու անհամապատասխանությունը վերացնելու համար անհրաժեշտ է՝

- անասունների արհեստական սերմնավորման համակարգի լայնատարած ներդրում: Ներկայումս Վորլդ Վիժն կազմակերպությունը ունի փորձարկում Կոթիում՝ համագործակցելով CARD հիմնադրամի հետ: Ընդ որում, պետք է անասունների ծինը պլանավորել ամբողջ տարվա ընթացքում՝ կաթի արտադրության սեզոնայնությունը հարթելու և եկամտաբերությունը աճեցնելու համար:

- Անասունների լիակատար կերակրման նոր համակարգի ներդրում և գյուղացիներին ուսուցում՝ լիակատար կերակրման առավելությունների մասին: Անասնակերի արտադրության սարքավորումների ապահովում, այս ոլորտում սկսնակ գործարարների խրախուսում, նաև՝ ֆինանսական աջակցության ծրագրերով:
- Կերային մշակաբույսերի մշակման աջակցություն՝ սերմացուի, տեխնիկայի, ինչպես նաև նոր մշակաբույսների ներդրման ուղղությամբ:

Պանրի արտադրության մեջ տարածաշրջանում կա առաջատար և դրական փորձ՝ ի դեմս Կոթիի պանրի արտադրամասի: Ընդհանուր առմամբ, պանրագործության զարգացման և կաթից ավելի մեծ ավելացված արժեք ապահովելու համար անհրաժեշտ է՝

- բարելավել պանրի արտադրության սանիտարա- հիգիենիկ պայմանները: Տնական պայմաններում պանրի արտադրության համար շինությունները, պահեստները, սարքավորումները վերափոխման կարիք ունեն, ինչպես նաև կարիք կա պանրի արտադրության պայմանների և տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթացների:
- Փաթեթավորումն ու տարածաշրջանային բրենդի ստեղծումը կարող են էապես խթանել պանիրն ավելի թանկ և նպատակային վաճառելու գործընթացը:
- Նորովի պանրի արտադրությունը նաև ֆինանսական աջակցության գործիքների կիրառման կարիք է առաջացնում, հատկապես՝ սարքավորումների նորացման և շենքային պայմանների բարելավման առումով:

Մսի իրացման և վերամշակման համար անհրաժեշտ է՝

- տարածաշրջանում գոնե մեկ սպանդանոցի հիմնում՝ համապատասխան սարքավորումներով հագեցած:
- կարող են գործել նաև մսի նախնական վերամշակման փոքր արտադրամասեր՝ բաստուրմայի, սուջուխի, մսի կիսաֆարրիկատների արտադրություն և այլն:

Բ. Հացահատիկային կուլտուրաների աճեցում

Տարածաշրջանում հացահատիկային կուլտուրաների աճեցման բացարձակ առաջատարը Կորեին է, որտեղ աճեցվում է 600 հեկտար հացահատիկ (350 հեկտար ցորեն և 250 հեկտար գարի): Մնացած 4 համայնքները միասին աճեցնում են մոտ 60 - 70 հեկտար հացահատիկ:

Ցորենը հիմնական հացահատիկային մշակաբույսն է այս տարածաշրջանի համար: Ցորենի բերքատվությամբ դիտարկվող հինգ գյուղերը զիջում են Հայաստանի առաջատար համայնքներին: Համեմատական աղյուսակը ավելի պատկերավոր է ներկայացնում այս եզրակացությունը՝

Աղյուսակ 6. Ցորենի բերքատվության համեմատական վերլուծություն

Մշակաբույս	Բերքատվություն, 1 հա /միջինը, տոննա		
	Դիտարկվող համայնքներ	Առաջատար մարզ	ՀՀ միջին
Աշնանացան ցորեն	1.5 - 2 տ	Արարատ 3,31	2,12
Գարի	1.5 - 1.9 տ	Արարատ 2,54	2,01

Տարածքի բնակչությունը ցորենի աճեցումը արդարացնում է մի քանի հիմնավորմամբ՝

- ծախսեր քիչ են պահանջվում,
- ֆիզիկական աշխատանքը քիչ է, որը հատկապես էական է սահմանին հարող տարածքներում, որտեղ պարբերական աշխատանքը կյանքի կամ առողջության սպառնալիք է ներառում հակառակորդի գնադակոծությունների պատճառով:
- Ցորենը մի կողմից հեշտ է իրացվում, մյուս կողմից՝ տնային տնտեսությունների կարիքների բավարարմանն է ուղղվում:
- Ցորենի աճեցման տարածքները հիմնականում անջրդի են և հարմար են միայն ցորենի աճեցման համար:

Իհարկե, այս հիմնավորումները ծանրակշիռ են, սակայն հիմա մեծ աշխատանքներ են տարվում ոռոգման նոր ջրագծերի անցկացման կամ հները վերանորոգելու ուղղությամբ: Իսկ եթե հողակտորը ջրովի է, ապա ցորենը դառնում է ամենաանարդյունավետ մշակաբույսը այս հողի և այս բնակլիմայական պայմանների համար: Ստորև ցորենի եկամտաբերության համեմատական հաշվարկն է՝ այլ մշակաբույսերի հետ համեմատած, որոնք հնարավոր է աճեցնել կամ արդեն աճեցվում է այս տարածաշրջանում, եթե հողակտորը ջրովի է:

Աղյուսակներ 7., 8. Ցորենի եկամտաբերության համեմատական վերլուծությունը այլ մշակաբույսերի հետ համեմատած

	Ցորեն	Գարի	Զմերուկ
Վար	30000		
Ցանքս	15000		
Հունձ	26000		
Թունաքիմիկատ	15000		
Սերմ	300 կգ * 200 դրամ	200 * 180 դրամ	
Ծախսեր	146 000 դրամ	122 000 դրամ	291 500 դրամ
Վաճառք	2 տ * 170 դրամ =	2 տ * 150 դրամ =	1 020 000 դրամ
	340 000 դրամ	300 000 դրամ	
Շահույթ	194 000 դրամ	178 000 դրամ	743 000 դրամ

1 հեկտարի հաշվարկով	Լոլիկ	Վարունգ	Զմերուկ
Բերքատվություն	25 տոննա	22 տոննա	60 տոննա
Ծախսեր	900 000 դրամ	690 000 դրամ	800 000 դրամ
Եկամուտ	2 000 000 դրամ	1 540 000 դրամ	4 200 000 դրամ
Շահույթ	1 100 000 դրամ	850 000 դրամ	3 400 000 դրամ

Այսուհանդերձ, սահմանին ուղղակի հարող և ոռոգման ջուր չունեցող տարածքներում ցորենի մշակումը դեռ երկար կշարունակվի, որի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- որակյալ և տարածքին հարմար սերմացուի մատակարարում:
- Տարածաշրջանի գյուղերի համար նոր կոմբայնի ձեռքբերում, որը կօգնի մոտ 20%-ով նվազեցնել բերքի կորուստը:
- Թրթուրավոր տրակտորների ձեռքբերման աջակցություն (լիզինգային տարբերակով, տարեկան դրամային տոկոսադրույթը՝ 10 տոկոսից ոչ ավել), որի շնորհիվ հնարավոր կլինի մշակել արդեն խոպան դարձած վարելահողը:
- Որակյալ և տարածաշրջանի հողային կազմին համապատասխան պարարտանյութի ձեռքբերման աջակցություն, ի լրումն պետական աջակցության մեխանիզմի:
- Անասնակերի արտադրության սկսնակ ընկերությունների աջակցություն, ինչպես դա նկարագրված է նախորդ բաժնում:

Գ. Այգեգործություն

Դեռևս խորհրդային կարգերի ժամանակ այս տարածաշրջանում սկսեց զարգանալ այգեգործությունը: Հարյուրավոր հեկտարների հասնող խաղողի, դեղձենու, ընկուզենու այգիները տալիս էին Հայաստանում լավագույն բերքը:

Խորհրդային կարգերի փլուզումը և ծավալվող պատերազմը 90- ական թվականներին այգիների մեծ մասի ոչնչացման պատճառ հանդիսացան:

Հիմա **խաղողի** այգիները մի քանի տասնյակ հեկտար են (տես՝ ներքևի աղյուսակում), հիմնականում՝ Կոթիում: Հողակտորները փոքր են (0,1-0,2 հա), պատկանում են տարբեր սեփականատերերի: Սորտերը խառն են, բերքը, համեմատած խաղողագործական մյուս շրջանների հետ՝ մոտ 30%- ով ավելի քիչ: Ռոռզման ջրի պակասը նույնպես բացասաբար է ազդում խաղողագործության զարգացման վրա: Սակայն մարդիկ դեռևս տիրապետում են խաղողագործությանը և պատրաստ են նոր այգիներ տնկել:

Համայնքներում մոտ 80 տնտեսություններ աճեցում են գրեթե 40 հեկտար խաղող: Խոշոր խաղողագործներ չկան: Մեկ տնտեսությանը բաժին է ընկնում մոտ 0.5 հեկտար խաղողի այգի:

Խաղողի բերքով տնական պայմաններում գինի են արտադրում: Գինեգործության մեջ ընդգծված հաջողություններ չունեն: Արտադրված գինին հիմնականում ներքին սպառման համար է:

Պտղաբուծությունն ունի 40- 50 տարվա պատմություն: Դրա ծավալները նույնպես էապես կրճատվել են խորհրդային կարգերից հետո. Բերքաբերի ջրամբարի գործարկումը դադարեցվեց և սկսվեց պատերազմը, իսկ այգիները մի մասը հենց շփման գծում էին:

Հիմա, հիմնականում՝ տնամերձերում, աճեցնում են տանձ, խնձոր, դեղձ, ընկույզ: Ռոռզման ջրի մոտալուտ մատակարարումը մարդկանց պլանների մեջ փոփոխություններ է մտցնում: Շատերը պլանավորում են դեղձի, խնձորի, տանձի, արքայանարնջի նոր այգիներ տնկել, էթե ունենան հասանելի ռեսուրսներ, ապա՝ իրացման շուկա:

Հիմա արտադրած միրգը հիմնականում վաճառում են ճամփեզրին. տարածքով անցնում է միջպետական մայրուղին: Բաղանիսում այս տարվանից գործարկվում է գյուղատնտեսական մթերքների նոր շուկան, որը նույնպես կխթանի տեղական թարմ մրգերի և բանջարեղենի արտադրությունը:

Տարածաշրջանում մրգերի և հատապտուղների մթերման առաջատարը Ջուջևանի պահածոների գործարանն է: Տարեցտարի ավելացվում է մթերման ծավալը և տեսականին: Գործարանը նոր շուկաներ է գրավում, սկսում է որակի կառավարման համակարգի ուղղությամբ մտածել: Գործարանը մի կողմից մթերում է տարածքի դեղձն ու հոնը, ընկույզն ու անտառի բարիքները, մյուս կողմից լավ օրինակ է փոքր վերամշակման արտադրամասի, որի հաջողությունը

ընկերության աշխատակիցները ապացուցում են իրենց քրտնաջան անընդհատ աշխատանքով և տեխնոլոգիաների ու շուկաների կատարելագործմամբ:

Տարածաշրջանում ընդունված է նաև հատապտուղների, սեզոնային բանջարեղենի և այլ անտառային բարիքների **հավաքչարարությունն** ու իրացումը ճանապարհի եզրին, Ջուջևանի պահածոների գործարանին կամ մեծ մթերողների՝ հոնի դեպքում: Տարածաշրջանից հարյուրավոր մարդիկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն հավաքում են սկզբում սինդրիկ ու ծնեբեկ, ապա՝ ազնվամորի ու մոռ, վերջում էլ՝ ընկույզ ու հոն:

Մինդրիկն ու ծնեբեկն իրացվում են ճամփեզրին կամ հարևաններին, հատապտուղներն ու ընկույզը՝ Ջուջևանի պահածոների գործարանին, իսկ հոնը մթերում են նաև մեծածախ իրացնողները:

2014- ը բարենպաստ չէ ընկույզի և հոնի առումով: Ձմեռային և գարնանային ցրտահարությունները ոչնչացրել են բերքի մեծ մասը:

Հավաքչարարությամբ զբաղվող մարդկանց համար եկամուտը չի բավարարում անգամ ընտանիքի նվազագույն ծախսերը հոգալու համար: Աշխատանքը ծանր է, օրական քայլում են ավելի քան քսան կիլոմետր, իսկ եկամուտը՝ քիչ:

Նախաձեռնություններ այգեգործության զարգացման ուղղությամբ

Այգեգործությունը, թեկուզև համարվում է ավանդական, միաժամանակ վերածնվող ճյուղ է այս գոտու համար՝ պայմանավորված ոռոգման ջրի առաջիկա մատակարարման հետ Կարմիր Գյուղի սարերից: Այգեգործության զարգացումը ենթադրում է հետևյալ գործողությունների և միջոցառումների իրականացումը՝

- տարածաշրջանին համապատասխան տնկիների մատակարարում՝ դեղձ, սալոր, տանձ, ինձոր:
- Կաթիլային ոռոգման համակարգի ներդրման փորձարկում, լայնածավալ կիրառում:
- Հակակարկտային ցանցերի և համակարգերի փորձարկում, լայնածավալ կիրառում:
- Խաղողի այգիների թարմացում, մթերման հնարավորությունների ընդլայնում:
- Չրի արտադրության համար ձեռնարկատիրության խթանում տեխնոլոգիական, ձեռնարկատիրական, ֆինանսական աջակցության գործիքներով:
- Ազնվամորու այգիների զարգացման աջակցություն ֆինանսական, տեխնոլոգիական աջակցության գործիքներով:

Դ. Բանջարաբուծություն

Խորհրդային շրջանում, 80- ական թվականներից, կապված Բերքաբերի ջրամբարից ոռոգման ջրի մատակարարման հետ, այս տարածաշրջանում բանջարաբուծությանը զարգացավ: Մի քանի տարում Կոթին և հարակից համայնքները հայտնի դարձան լուիկով, վարունգով ու ձմերուկով²: Այս մշակաբույսերի բերքատվությունը չէր զիջում Արարատյան դաշտավայրի հայտնի գյուղատնտեսական գոտիներին:

Պատերազմական գործողությունների սկզբում ոռոգման ջրագիծը քանդվեց, բանջարաբուծությունն էլ աստիճանաբար վերացավ՝ սահմանափակվելով միայն տնամերձ հողակտորներում տնտեսության ներքին սպառման համար բանջարաբուստանային կուլտուրաների աճեցմամբ: Տարածաշրջանը աստիճանաբար այս մշակաբույսերի արտադրողից վերածվեց դրանց սպառողի:

Հիմա ոռոգման ջրի հասանելիությունը նոր հնարավորություն է ստեղծում՝ վերածնել բանջարաբուծությունը, հատկապես, որ այդ հողերում հիմա ցորեն է աճեցվում՝ զիջելով լուիկին կամ վարունգին իր շահութաբերությամբ մոտ չորս անգամ:

Տարածաշրջանում բանջարաբուծության զարգացման համար հետևյալ գործողություններ են անհրաժեշտ՝

- ոռոգման ջրի մատակարարման ցանցի վերականգնում (սա առանձին կքննարկվի ենթակառուցվածքների վերականգնման և կառուցման բաժնում):
- Որակյալ սերմերի ու սածիլների մատակարարում:
- Աճեցման ժամանակակից տեխնոլոգիաների և շուկաների մասին դասընթացներ գյուղացիներին:
- Հասանելի ֆինանսավորում՝ բանջարաբուծության համար:
- Հասանելի գյուղատնտեսական տեխնիկա՝ մինի տրակտորներ և համապատասխան գործիքներ (տեխնիկան կարող է իրացվել լիզինգային տարբերակով, կամ կարող են ստեղծվել մեքենատրակտորային կայաններ, որոնք հասանելի ծառայություններ կմատուցեն գյուղացիներին):
- Փոքր ջերմոցային տնտեսությունների ստեղծման աջակցություն (մինչև 200մք), որոնք բանջարեղենի աճեցմամբ կզբաղվեն գյուղատնտեսական սեզոնից դուրս՝ սեպտեմբերից նոյեմբեր և մարտից մայիս ամիսներին: Այս ուղղությամբ առաջին քայլերը Կոթիում արդեն արվում են:

² Պայմանականորեն ձմերուկի աճեցումը դիտարկում ենք բանջարաբուստանային կուլտուրաների շարքում:

Ենթակառուցվածքային ծրագրեր

Ստորև ներկայացված են համայնքերի տնտեսությունների զարգացման վրա էական ազդեցություն ունեցող փոքր ենթակառուցվածքային ծրագրերը:

- Ներհամայնքային ջրագծերի կառուցում և ջրահավաք կայանների տեղադրում Ջուջևանում՝ մոտ 2 կմ:
 - Շահառուները՝ մոտ 30 տնային տնտեսություններ:
- 1.5 կմ երկարությամբ ոռոգման ջրագծի կառուցում Կոթի համայնքում:
 - Շահառուները՝ մոտ 50 հողագործներ:
- Ոռոգման ներքին ցանցի կառուցում Բարեկամավանում (մոտ 2 կմ):
 - Շահառուները՝ մոտ 20 հողագործներ:
- Ոռոգման ցանցի կառուցում Ոսկեվանում (մոտ 2 կմ):
 - Շահառուները՝ մոտ 30 հողագործներ:
- Բաղանիս համայնքում գյուղամիջյան ճանապարհի բացակայող կամուրջի կառուցում:
Այս ճանապարհը էական ազդեցություն ունի ներքին բեռնափոխադրումների հարցում:

Կանանց ներգրավվածությունը արժեզրթաներում

16 կին աշխատում են պանրի և մրգի / հատապտուղների վերամշակման արտադրամասերում:

Այգեգործության և դաշտավարության մեջ կանայք ներգրավված են հիմնականում տնամերձ այգիների մշակման մեջ: Իրենց սեփական տնամերձ այգիների և հողատարածքների մշակմանը մասնակցում են ավելի քան 160 կին:

84 կին ներգրավված են անասնապահության մեջ՝ հիմնականում կիթի, տնական պայմաններում պանրի ստացման և կենդանիների խնամքի գործընթացներում:

Եվս 30 կին զբաղվում են հավաքչարարությամբ՝ անտառներից և դաշտերից հավաքելով հատապտուղներ և բույսեր:

Շնորհակալություն ենք հայտնում Կոթի, Բաղանիս, Բարեկամավան, Ոսկեվան և Ջուջևան համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

